

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՊՐՈՖՏԵՍՍ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊԶԲ-2022/16-4-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Xience xpedition 48	Abbott Vascular	<p>Ստենտի նյութը՝ կոբալտի-քրոմի համաձուլվածք, ստենտի ծածկը՝ Էվերոլիմուս արտազատող ծածկ: Ստենտի կառուցվածքը լազերով կտրված կոբալտ-քրոմային գլան: 2.5-3.0 մմ տրամագծով ստենտն ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5 մմ-ոց ստենտն ունի երեք կարճ և վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Ստենտի եզրային օղը ձևավորված է սիմետրիկ ամրակներով՝ բարելավելու ուղղորդիչ կաթետերի դուրսբերումը: Ստենտի պատերի հաստությունը՝ 0.0032”:</p> <p>Ստենտի երկայնաձիգ ճկունությունը՝ գերազանց: Ստենտը ոչ ֆեռոմագնիսական է և ունի բարձր ճառագայթային ուժ: Մետաղական մակերեսի ընդարձակում - 13.3%-ի սահմաններում 3.0 մմ տրամագծի դեպքում: Անկախ լայնացման աստիճանից չի գերազանցում ստենտի երկարության 5%-ը: Բալոնի ճնշման ցուցանիշները՝ 8 մթն 2.5- 2.75 մմ տրամագծի ստենտերի համար, 10 մթն 3.0-3.5 մմ տրամագծի ստենտերի համար: Ստենտի բացման նոմինալ ճնշումը՝ 11 atm, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 atm (բոլոր տրամագծի ստենտերի համար):</p>

			<p>Բալոնի նյութը՝ բազմաշերտ պեբաքս: Ուղղորդիչ կաթետերի ներքին նվազագույն տրամագիծը մինչև 0.056 դյույմ կամ 1.4 մմ (բոլոր չափսի ստենտերի համար): Ստենտի դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային և ֆլուորո պոլիմերներից, որոնք օգտագործվում են անոթային կարի համար նախատեսված թելերի արտադրությունում: Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի մակերեսին՝ 100 մկգ/սմ²: Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2.5, 2.75, 3.0, 3.5 մմ: Ստենտի երկարությունը՝ 48 մմ: Ֆորմատ՝ հատ: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականի առկայություն: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին կունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ը: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը: Մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:</p>
--	--	--	---

